կետից, որովհետև բացառված չէ, որ այդ տարիների ընթացքում դուրս եկած և նոր ավելացած ձեռագրերի քանակը զուգադիպեր։

Է. [Մեսրոպ Տեր-Մովսիսյան (Մագիստրոս), Ցուցակ Տաթևի վանքի ձեռագիրների, Տաթև, 1904]: Այս ցուցակի ուր գտնվելն առայժմ պարզ չէ։ Ցուցակի գոյության և նկարագրված ձեռագրերի քանակի մասին իմանում ենք Մաշտոցյան Մատենադարանում պահվող Մ. Մագիստրոսի ձեռքով կատարված մի նշումից, ուր ասված է. «Տաթևի 99-ի մանրամասն ցուցակը կազմեցի 1904 թ. յուլիսի 22-օգոստոսի 11-ը»[11]։ Թե ինչ է ներկայացնում այս ցուցակն իրենից, չգիտենք։ Բայց ամենայն հավանականությամբ, ինչպես հենց հեղինակն է շեշտում, կազմված բոլոր ցուցակների մեջ այն ամենամանրամասն է եղել, քանի որ Մ. Մագիստրոսը տվյալներ էր հավաքում իր հայերեն ձեռագրերի լիակատար ցուցակի համար։

Ը. Խորեն Մուրադբեկյան, Ցուցակ Տաթևի վանքի ձեռագիրների, Տաթև, 1910[12]: Սույն ցուցակը կազմված է 1910 թվականի օգոստոսի 5—6-ը՝ Երևանի թեմի փոխ-թեմական Խորեն վրդ. Մուրադբեկյանի և Երևանի կոնսիստորիայի անդամ Անդրանիկ քահանայի ձեռքով։ Ցուցակում ձեռագրերը եթե համարակալված են 1—92, իրականում, սակայն, նկարագրված միավորների թիվը հավասար է 143-ի, որովհետև մի շարք թվահամարների ներքո «ա, բ, գ»-ով նշված են նույն բովանդակությամբ մեկից ավելի ձեռագրեր, այսպես. № 28-ի տակ նշված է 4 Հարցմանց գիրք (+3), № 43-ի տակ՝ 2 Ճառընտիր (+1), № 44-ի տակ՝ 11 Ցայսմաւուրք (+10), № 47-ի տակ՝ 22 Աւետարան (+21) և № 48-ի տակ՝ 2 Նարեկ (+1)։ Ցուցակում արձանագրված 143 միավորներից մեկը (№ 82) եղել է ինչ-որ տպագիր քերականական ձեռնարկ, իսկ մնացած 142-ը՝ ձեռագիր մատյաններ։ Այս ցուցակն էլ, նախորդների նման, մատենագիտական որևէ տվյալ չի հաղորդում և սահմանափակվում է միայն ձեռագրերի խորագրերը նշելով։

Այսպիսով, տարբեր ժամանակներում և տարբեր անձանց կողմից կազմված վերոհիշյալ ցուցակներում Տաթևի ձեռագրերի քանակը ցույց է տրված.

1863 թ.		187
1864—1865 թթ.	(61+78)	139
1866 թ.	(13+78)	91
1868 թ.		91
1893 թ.		73
1899 թ.	(107+9+64+7)	187
1904 թ.		99
1910 թ.		142

Արդ, ի՞նչ եղան այդ ձեռագրերը։

Տաթևի գրատան ձեռագրերը դեռևս 1910 թվականին Երևանի թեմի փոխթեմական Խորեն վրդ. Մուրադբեկյանի և Երևանի կոնսիստորիայի անդամ Անդրանիկ քահանայի ձեռքով ցուցակագրվելուց անմիջապես հետո տեղափոխվել են Էջմիածին և մուծվել Էջմիածնի նախկին գրատան հավաքածուի մեջ, իսկ

11 Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակների հավաքածու, գործ Մ. Մագիստրոսի, № 7։
12 Անդ, № 21։